«Երևանի Ա.Դ.Սախարովի անվան հ.69

հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

«Երգչախմբի» Հեղինակային

ուսումնական խմբակի ծրագիր

1.Երգչախմբի նպատակն է՝

. ձևավորել գիտելիքներ խմբերգային արվեստի և դրանում իրենց ստեղծագործական հանճարը դրսևորած հայ և օտարազգի կոմպոզիտորների մասին

. ձևավորել երգչական ձայնի տիրապետման, միաձայն և բազմաձայն երգեցողության կարողություններ

. զարգացնել լսելու և մեղեդին մաքուր վերարտադրելու կարողություն

. ուսուցանել հայ և օտարազգի կոմպոզիտորների ստեղծագործություններ

. իրականացնել թեմատիկ և ոչ թեմատիկ ելույթներ դպրոցական և արտադպրոցական միջոցառումներում

. մասնակցել մրցույթներին, փառատոններին

. համագործակցելմշակույթի կենտրոնների և այլ դպրոցների երգչախմբերի հետ

2.Երգչախմբի հիմնական խնդիրն է՝

սովորողներին հաղորդակից դարձնել խմբերգային արվեստին, դրա միջոցով սովորեցնելով թիմային աշխատանքի այս յուրահատուկ ձևն ու հաղորդակցությունը

3.Ակնկալվող վերջնարդյունքները

Սովորողը

.*կկարողանա* լսել և մաքուր վերարտադրել ստեղծագործության մեղեդիական գիծը, տարբերել մելոդիկ և հարմոնիկ հնչողությունը, կերգի նվագակցությամբ՝ մենակ և խմբով

.*կսովորի* բազմաթիվ երգեր տարբեր ստեղծագործություններից, որոնք բեմից կներկայացնի հանդիսատեսին

.*կճանաչի* հայ և արտասահմանցի կոմպոզիտորների հանրաճանաչ խմբերգային ստեղծագործությունները

4. Հատկացվող ընդհանուր ժամաքանակը

Շաբաթական՝ 2 դասաժամ

Տարեկան՝ 68 դասաժամ

5. Բովանդակությունը.

N	Թեմաների անվանումները	Ժամաքանակը
1	Ծանոթացնել խմբերգային արվեստի յուրահատկություններին, կանոններին: Ծանոթանալ երեխաների ձայնային տվյալներին, կատարել ձայնաբաշխում	2 ժ
2	Երգեցողություն կանոնները, դրանց կրառումը երգչախմբում: Ճիշտ շնչառություն և ձայնարտաբերում. ձայնավարժություն	2 ժ
3	Բանակի օրվան նվիրված երգերի ունկնդրում, ուսուցում	4 ժ
4	Աշխատանք երգերի ռիթմի, ինտոնացիայի, արտասանության վրա: Երգերի ամրապնդում	4 ժ
5	Զգվող և ընդհատվող վանկերով ձայնավարժություն: Աշխատանք շղթայակապ շնչառության վրա	2 ժ
6	Երգեր Երևանի մասին. Ունկնդրում, վերլուծում, ուսուցում	4 ժ
7	Երգերի ամրապնդում	4 ժ
8	Վարժանք մաժորային և մինորային հնչողության ընկալման և վերարտադրման վրա	2 ժ
9	Ամանորյա երգերի ունկնդրում, ծանոթացում, ուսուցում	4 ժ
10	Աշխատանք դիկցիայի, ռիթմի, տեմպի վրա	2 ժ
11	Երգերի ամրապնդում	2 ժ
12	Ունիսոն երգեցողության զարգացում:	2 ժ
13	Երգեր Հայաստանին նվիրված: Ունկնդրում, ծանոթացում տեքստին, ուսուցում	4 ժ
14	Աշխատանք ինտոնացիայի, ռիթմի, կատարման վրա	2 ժ
15	Երգերի ամրապնդում	4 ժ
16	Զայնավարժություններ ստակատոներով և լայնաշունչ մեղեդիական դարձվածքով	2 ժ
17	Երգեր մոր մասին: Ունկնդրում, ուսուցում	4 ժ
18	Աշխատանք կատարման տեխնիկայի վրա	4 ժ
19	Երգերի ամրապնդում	2 ժ
20	Զայնավարժություններ <<Կանոն>> տեխնիկայով	2 ժ
21	Նախապատրաստում տարեվերջյան համերգին: Երգերի	1 ժ

	ունկնդրում	
22	Երգերի ուսուցում, տեքստային և տեխնիկական աշխատանք	**4 ժ**
23	Երգերի ամրապնդում	**3 ժ**
24	Համերգային ծրագրի կրկնողություն, բեմական փորձ	**1 ժ**
25	Ելույթ համերգային կատարմամբ	**1 ժ**